



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ք. Երևան Ս. Դավթի 87Ա

« 10 » Հունիս 2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 63569-1

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՎՐԱ ԱՐԳԵԼԱՆՔ ԴՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԱԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի գլխավոր մասնագետ Հակոբ Հակոբյանս վերանայելով հարկ վճարողի վերաբերյալ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 12.05.2021թ-ի թիվ ԱՀ 63569 հանձնարարագրի հիման վրա կայացված <հարկ վճարողի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին> 18.05.2021թ-ի թիվ 63569 որոշումը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 12.05.2021թ-ի թիվ ԱՀ 63659 հանձնարարագրի՝ 16.11.2020թ.-ի թիվ 3101818, 29.01.2021թ.-ի թիվ 3101912 ստուգման ակտերի և 19.04.2021թ.-ի թիվ 43548-20 Ա որոշման հիման վրա <<ԳԱԶ ՊՐՈՊԱՆ>> ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝01263973, հասցե՝ ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա թղմ. Տիշինայի փ. 26, պետ գրանցման համարը՝ 290.110.832705) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա 18.05.2021թ.-ի թիվ 63659 որոշմաբ 1.762.125 դրամի չափով կիրառվել է արգելանք:

<<ԳԱԶ ՊՐՈՊԱՆ>> ՍՊԸ-ի կողմից 05.04.2021 թվականին հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ պետական եկամուտների կոմիտեի՝ 29.01.2021 թվականի թիվ 3101912 ստուգման ակտը վերացնելու պահանջի մասին: Թիվ ՎԴ/3189/05/21 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 11.05.2021 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը: Հաշվի առնելով, որ թիվ 3101912 ակտը վերացնելու պահանջի մասին բերվել է վարչական բողոք, ուստի հարկ վճարողի անձնական հաշվի քարտերից հանվել է 600.000 դրամ ակտի պարտավորությունը: Արդյունքում ՀՀ ՊԵԿ նախագահի կողմից 12.05.2021թ.-ի թիվ ԱՀ 63569 հանձնարարագրի գումարի չափը նվազել է դառնալով 1.162.125 դրամ: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի՝ հարկային մարմնի կողմից արգելանք կարող է կիրառվել հարկ վճարողի չկատարված հարկային

պարտավորությունները 1,5 միլիոն դրամ կամ ավելի կազմելու դեպքում: Նկատի ունենալով, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 12.05.2021թ.-ի ԱՀ 63659 հանձնարարագրի գումարի չափը նվազել է և չի գերազանցում 1.500.000 դրամը՝ ուստի ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և 63-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 65-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Անվավեր ճանաչել 12.05.2021թ-ի թիվ ԱՀ 63569 հանձնարարագրի հիման վրա <<**ԳԱԶ ՊՐՈՊԱՆ**>> ՍՊԸ-ի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին 18.05.2021թ-ի թիվ 63569 որոշումը:

Հ. Հակոբյան

/արգելանք դնող պաշտոնատար
անձի անունը, ազգանունը/

